ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<17>> ----------2012թ. N 564

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժնի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 21/21.7/17963-12 գրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ուղարկված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի Այգեգործական N 4 թաղամասի N 1 փողոցի N 14 տան բնակիչ Համլետ Մանուկյանի Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղված դիմումը և Արմավիրի մարզի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2012 թվականի դեկտեմբերի 10-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Համլետ Մանուկյանին հատկացնել 25000 /քսանհինգ հազար/ դրամ միանվագ օգնություն:*
2. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:*
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ